խորանին Հայոց, Հայք տարածեցին զսիրոցն մինչեւ չորիցս անգամ, և նոքա բարձին. ապա ժողովեալ այլազգի Շէյխք տեղւոյն կամեցան խաղաղացուցանել զնոսա, այլ նոքա ոչ առին յանձն, մինչեւ այլազգեաց ձեռօք իւրեանց բանալ զճանապարհն ըստ կամաց նոցին. Հայք դարձան յԵրուսաղէմ և պատմեցին Դատաւորին զեղեալսն, և նորա կոչեալ զԹարգմանն Լատինաց՝ կշտամբեալ յանդիմանէ զնա վասն դրան և ճանապարհին. և թէ Հայք և Յոյնք բաժանորդ եղեն անդ հրամանաւ Արքայի, և զձեզ ոչ ոք գիտէ ունել տեղի անդանօր և դուռն ձեր նորատահման է, եւ ոչ յատուկ մուրհակաւ, և զիա՞րդ համարձակիք զեկեղեցին Հայոց առնել ձեզ ճանապարհ օգնութեամբ արիւնարբու Ֆէլլահաց, դուք ասէք թէ Փոխանորդն ձեր չէ ասա, և ոչ տայք տուրս Տէրութեան, ապա զի՞նչ են արարք ձեր. այսուհետեւ չունիք հրաման կադել ընդ Հայս վասն հիւսիսային դրան և եկեղեցւոյ, մինչեւ ունիցիք վաւերագիրս այլովքն հանդերձ։

Եւ յերեկոյին յայնմիկ եկն Լատին վարդապետ մի Թարգմանաւ 'ի վանս Հայոց, և իբր չքմեղս լեալ ասէր թէ՝ Տեսուչն և ծերակոյտն չունին հաճութիւն ընդ այն, և թէ՝ Փոխանորդ տեղւոյն եւ այլք ինքնագլուխ արարեալ են զայն, և ապա աղաչէր հանդարտիլ 'ի բարկութենէ և անոխակալ լինիլ. զի Փոխանորդն մեծ չէր անդ, և միաբանք Բեթղեհէմի ստահակք եւ անհնազանդ մեզ, իցէ թէ 'ի դրդմանէ Յունաց է այն. սակայն ճանապարհաւ իւիք հանդարտեմք զնոսա։ Հայք ընկալան զբանս նորա, և խօսեցան հաշտութիւն, և թէ՝ չյարուցանել միւսանգամ վէճըս վասն դրան Այրին եւ ճանապարհին, աղաչէր զնոսա վարդապետն գնալ 'ի Բեթղեհէմ, տեսանել զտեղին եւ բառնալ զխռովութիւնն, թէպէտ Հայք յառաջագոյն հրաւիրեցին զնոսա գնալ անդ՝ բայց նոքա ոչ կամեցան, եւ մեկնեցաւ Վարդապետն սիրով երթալ պատմել իւրոցն։ Իսկ Հայք առին դիր 'ի Դատաւորէն և 'ի Քաղաքապետէն առ դիւղացի Ֆէլլահս, զի մի ոք իշխեսցէ բառնալ ըզսիրոցս Հայոց յեկեղեցւոջ անդ (յ3 Փետրվարի)։ Տեսուչն Հայոց եւ ընթեռնուլ զգիրս 'ի լուր ամենեցուն, և նոցա ամբաստանեալ զմիմեանս քակտեցան 'ի միաբանութենէ